ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

# Հարգանքի տուրք ՀՀ Ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի հիշատակին

ՀՀ պաշտպանության նախարարության եւ զինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավար կազմը՝ ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանի** գլխավորությամբ, հուլիսի 20-ին այցելել է «Եռաբլուր» պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու ՀՀ Ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի հիշատակին: ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ **Վրթանես** եպիսկոպոս **Աբրահամյանի** մատուցմամբ կատարվել է խնկարկման արարողություն:



Ինչպես հայտնեցին ՀՀ ՊՆ *տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից*, այնուհետեւ Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի է ունեցել հուշ-երեկույթ, որին մասնակցել են հերոսի մարտական ընկերները, հարազատները եւ զինվորականները:

*Շարունակությունը՝ էջ 4*

# Հարգանքի տուրք ՀՀ Ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի հիշատակին

*Սկիզբը՝ էջ 1*

Մարշի դաշտում Ազգային հերոսի կատարած սխրանքների մասին ներկաներին պատմել են հատուկ գնդի 1-ին հրամանատար **Սերգեյ Առաքելյանը**, «Հատուկ գունդ վետերանների միություն» ՀԿ նախագահ, գեներալ-լեյտենանտ **Գուրգեն Մելիքյանը**: Ջիվան Աբրահամյանի մայրը՝ **Բավական Աբրահամյանը**, իր խոսքում նշել է, որ հպարտ է հերոս որդի ծնելու եւ հայրենիքը ամեն ինչից վեր դասող զավակի մայր լինելու համար: Դիմելով դահլիճում ներկաներին՝ հերոսի մայրը նշել է. *«Շնորհակալ եմ, որ հիշում եք մեր ազգի հերոսներին, ովքեր զոհվել են մեր երկրի եւ մեր ժողովրդի լուսավոր ապագայի համար: Փառք մեր զինվորներին»:*

Խոսելով արցախյան պատերազմի եւ ՀՀ Ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի ունեցած ավանդի մասին՝ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մասնավորապես, ասել է. *«Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում շատ մոտ է եղել զինվորի մասնագիտությանը, անընդհատ մարտնչել ու պայքարել է իր գոյության համար: Մեր ժողովրդի նվիրյալ շատ որդիներ օժտված են հրամանատարի կարողություններով: Նրանցից էր Ջիվան Աբրահամյանը: Ջիվանը գաղափարի մարտիկ էր: Մենք այսօր հպարտություն ենք ապրում, որ ունեցել ենք նրա նման մարտական ընկեր, ում օրինակը ուսանելի է մատաղ սերնդի եւ հատկապես մեր զինվորների համար:*

*Կարծում եմ՝ Ջիվան Աբրահամյանի եւ մեր բոլոր մյուս հերոսների գործը կիսատ չի մնացել. նրանց գործի ամենամեծ ծնունդը հայոց բանակն է, որը, պաշտպանելով մեր երկրի սահմանները, ապահովում է մեր ժողովրդի անվտանգությունը եւ հետագա զարգացումը:*

*Հավերժ փառք Ջիվան Աբրահամյանին, փառք նրա ծնողներին: Իմ խոնարհումն եմ բերում բոլոր նրանց, ում շնորհիվ արցախյան գոյապայքարը պսակվեց հաղթանակով: Մենք պարտավոր ենք պահպանել մեր նախասակների կյանքի գնով ձեռք բերված հաջողությունները»:*